

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ**

Ստանդարտների մշակման ծառայություններ

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությունը «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում, իրականացնում է հետևյալ ծառայությունները՝

- ընդունում եւ գործողության մեջ է դնում ազգային ստանդարտները,
- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական եւ ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային ստանդարտների եւ այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը ազգային ստանդարտների կարգավիճակով՝ ստանդարտացման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան,
- կազմակերպում է միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների փորձաքննություն,
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային կազմակերպություններում,
- մասնակցում է միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքներին,
- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ եւ համակարգում դրանց գործունեությունը,
- ստեղծում եւ վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը,
- իրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների եւ ուղեցույցների, դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը) եւ պատասխանատվություն է կրում դրանց պահպանման համար:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերությանը ամրագրված ծառայությունները ֆինանսավորվում են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն և Հայաստանի Հանրապետության ամենամյա բյուջեի մասին ՀՀ օրենքի 04 բաժնի, 01 խմբի, 01 դասի Ստանդարտների մշակման ծառայություններ, որով ծառայությունները խմբավորվում են՝

1. Ազգային ստանդարտների մշակում,

2. Ստանդարտացման միջազգային (ISO, IEC, ITU), եվրոպական (CEN) և միջպետական (ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ) ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում,

3. Ստանդարտացման ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են հանդիսանում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում արտադրանքների արտադրությամբ, աշխատանքների կատարմամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղվող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, հասարակական կազմակերպությունները, գիտահետազոտական կազմակերպությունները, սպառողները, ինչպես նաև ցանկացած ֆիզիկական անձիք (այսուհետ՝ ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմեր):

Նախորդող միջնաժամկետ հատվածում (2017-2019թթ.) կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

2017 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտի պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 14097.0 հազ. դրամ: Ազգային ստանդարտների մշակման աշխատանքների ֆինանսավորումը 2017 թվականին կազմել է 8865.6 հազ. դրամ: 2017թ. մշակվել է 55 ազգային ստանդարտ, ստանդարտների ազգային ֆոնդից սպասարկվել են մոտ 11500 այցելուներ և 30 բաժանորդ կազմակերպություններ:

Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը 2017 թվականին կազմել է 2439.6 հազ. դրամ:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների ֆինանսավորումը 2017 թվականին կազմել է 2791.8 հազ. դրամ:

2018 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտի պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 14123.4 հազ. դրամ: Ազգային ստանդարտների մշակման աշխատանքների ֆինանսավորումը 2017 թվականին կազմել է 8242.8 հազ. դրամ: 2017թ. մշակվել է 30 ազգային ստանդարտ, ստանդարտների ազգային ֆոնդից սպասարկվել են մոտ 11200 այցելուներ և 31 բաժանորդ կազմակերպություններ:

Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը 2017 թվականին կազմել է 2000.2 հազ. դրամ:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների ֆինանսավորումը 2017 թվականին կազմել է 3880.4 հազ. դրամ:

2017-2019թթ. վերոգրյալ աշխատանքների վերլուծության ամփոփ նկարագիրը ներկայացված է հետևյալ աղյուսակում.

հազար դրամ

Ծրագրերի անվանումը	2017		2018		2019
	նախ.	փաստ.	նախ.	փաստ.	նախ.
Ազգային ստանդարտների մշակման աշխատանքներ	8800.8	8865.6	8242.8	8242.8	10211.8
Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման աշխատանքներ	1887.1	2439.6	2000.2	2000.2	1941.6
Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ	3260.4	2791.8	3880.4	3880.4	1970.0
Ընդամենը	14123.4	14097.0	14123.4	14123.4	14123.4

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ազգային ստանդարտների ծրագրի նպատակն է աջակցել հայրենական արտադրանքի արտանահման ծավալների ավելացմանը, հայրենական արտադրողներին հնարավորություն տալ ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները, արտադրել միջազգային շուկայում մրցունակ արտադրանք, ներդնել նորագույն տեխնոլոգիաներ և կիրառել միջազգային

լավագույն փորձը՝ տարաբնույթ տնտեսական զարգացումը խթանող խնդիրների հանգուցալուծման համար:

Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման ծրագրի նպատակն է հայրենական արտադրողների շահերի պաշտպանումը միջազգային և տարածաշրջանային շուկաներում և արտադրանքի մրցունակության բարձրացումը:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագրի նպատակն է ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ և պատշաճ և հավաստի տեղեկատվություն տրամադրել ձեռներեցներին, բիզնեսի ներկայացուցիչներին և պետական կառավարման մարմիններին գործող ստանդարտների վերաբերյալ:

Եվրասիական տնտեսական միության և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն, ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում ծրագրի նպատակն է ընդունել և գործողության մեջ դնել միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտներ, որոնք կոչված են ապահովելու Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ու մրցունակության բարձրացման նախադրյալները: Կիրառելով այդ ստանդարտները՝ հայրենական արտադրողները հնարավորություն կունենան ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները և արտադրել ԵԱՏՄ շուկայում մրցունակ արտադրանք՝ արտահանելով և ներմուծելով այդ արտադրանքները ԵԱՏՄ շուկա՝ առանց տեխնիկական խոչընդոտների:

Հայաստանի Հանրապետությունը որպես Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ, 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն պարտավորվել է ՀՀ տարածքում գործողության մեջ դնել Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը: Ընդ որում, յուրաքանչյուր տեխնիկական կանոնակարգի կիրառման համար նախապես անհրաժեշտ է փորձաքննության ենթարկել տեխնիկական կանոնակարգերի կատարումն ապահովող ստանդարտների ցանկերը, որի նպատակն է գործողության մեջ դնել համապատասխան ոլորտների միջպետական ստանդարտները և դադարեցնել հակասող ազգային ստանդարտների գործողությունը: Փորձաքննության հիմնական նպատակն է ԵԱՏՄ անդամ-պետությունների տարածքում միասնական ստանդարտների կիրառումը: Տեխնիկական կանոնակարգման ոլորտներում միջպետական ստանդարտների ընդունումը և հակասող ազգային ստանդարտների գործողության դադարեցումը (ներդաշնակեցման գործընթաց) աշխատատար և շարունակական գործընթաց է:

Մասնակցություն ստանդարտացման միջազգային, միջպետական և տարածաշրջանային կազմակերպությունների նիստերին և դրանց տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն Սույն ծրագիրը հնարավորություն է տալիս Ինստիտուտի համապատասխան մասնագետներին մասնակցել Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), Ստանդարտացման Եվրոպական Կոմիտեի (ՍԵՆ) և (ԱՊՀ) Ստանդարտացման միջպետական խորհրդի և դրանց ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին, ինչպես նաև ստանդարտացման ոլորտում արդի խնդիրների քննարկմանը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ի դեմս Ստանդարտների ազգային ինստիտուտի անդամակցում է ԻՍՕ-ի 66 և

ՍԵՆ-ի 3 տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ որպես այդ հանձնաժողովների անդամ:

Հայաստանի Հանրապետությունը 2015թ. հունվարի 1-ից անդամակցում է Եվրասիական Տնտեսական Միությանը, իսկ Ստանդարտների ազգային ինստիտուտը ընդգրկվել է այդ կառույցի տարբեր աշխատանքային խմբերում՝ որպես ստանդարտացման ազգային մարմին: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ստանդարտացման ոլորտի մասնագետների մասնակցությունը ԵԱՏՄ, ՄՊԽ Ստանդարտացման գիտատեխնիկական հանձնաժողովի և տարբեր ենթահանձնաժողովների նիստերին:

Հանդիսանալով միջազգային ստանդարտացման վերը նշված կազմակերպությունների անդամ, Ստանդարտների ազգային ինստիտուտը պարտավոր է անմասն չմնալ այդ կազմակերպությունների աշխատանքից և ակտիվորեն մասնակցել հրավիրվող խորհրդակցություններին և տարեկան վեհաժողովներին: Այդպիսի մասնակցությունը կարևոր է ոչ միայն ազգային ստանդարտների ներդրման ու մասնագիտական առումով, այլև բխում է համապատասխան համաձայնագրերով ստանձնած միջազգային և միջպետական պարտավորություններից: Այդպիսի մասնակցությունը բարձրացնում է Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում, թույլ է տալիս միջազգային շուկաներում պաշտպանել հայրենական արտադրողների շահերը, վերացնել առևտրում տեխնիկական խոչընդոտները և հիմք դնել տարբեր շահագրգիռ կազմակերպությունների հետ նոր շահավետ համագործակցությանը:

Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության վճար ծրագրի նպատակն է մշակված ստանդարտների գիտատեխնիկական մակարդակի ապահովումը:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ	
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը		Ժամկետը
Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացում և հայրենական արտադրանքների մրցունակության բարձրացում	04/01/01 Ստանդարտների մշակման ծառայություններ	Նպաստել նորարական ազգային ստանդարտների ներդրմանը և կիրառմանը ՀՀ-ում՝ ազգային արտադրության ու ծառայությունների որակի բարձրացման, առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման, շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի անվտանգության պաշտպանության, կառավարման լավագույն փորձի ներդրման, սպառողների շահերի պաշտպանության և իրազեկվածության բարձրացման նպատակներով:	Ազգային ստանդարտների մշակում: Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում: Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում: ԵԱՏՄ և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն	2019թ.	Ստանդարտացման ազգային համակարգի զարգացում, որի միջոցով հնարավոր է տնտեսության մեջ ներարկել կառավարման լավագույն փորձը ու նորարարությունը, բարձրացնել գործընթացների ու աշխատանքների արդյունավետությունը, ձեռք բերել մրցակցային առավելություններ միջազգային շուկաներում և նպաստել հայրենական առևտրաարդյունաբերական համալիրի	2022թ.	ՍԱԻ ՓԲԸ-ն սահմանվում է ՀՀ կառավարության թ-յան կողմից և իրեն վերապահված իրավասությունների շրջանակում չափագիտության թ-յան բնագավառում իրականացնում պետական քաղաքականություն:

		ապահովող ստանդարտների փորձաքննություն ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում:		զարգացմանը: Տեխնիկական կանոնակարգման ոլորտներում միջպետական ստանդարտների ընդունում և հակասող ազգային ստանդարտների գործողության դադարեցում: ԵԱՏՄ շուկա մրցունակ հայրենական արտադրանքի ներմուծման և արտահանման ապահովում՝ առանց տեխնիկական խոչընդոտների:
--	--	--	--	--

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Ոլորտային քաղաքականության նպատակների և թիրախների ապահովման համար ՄԺԾԾ ժամանակահատվածում «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղությունները տրված են ստորև բերված աղյուսակում

Հ/Հ	Նպատակները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
1	Ազգային ստանդարտների մշակում	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի I կետ
2	Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում	ՀՀ ստանդարտացման ամենամյա ծրագիր
3	Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում	Առևտրի Համաշխարհային կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի պահանջներ
4	Եվրասիական տնտեսական միության և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն, ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում	2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 2-րդ հոդված
5	Մասնակցություն ստանդարտացման միջազգային, միջպետական և տարածաշրջանային կազմակերպությունների նիստերին և դրանց տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն	Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ), Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհրդի (ՍՉՍ ՄՊԻ) հետ

		կնքված պայմանագրեր
6	Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության վճար	

Ի լրումն վերոհիշյալ տեղեկատվության՝ ՄԺԾԾ հատվածում «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության ներքո գտնվող բնագավառի գծով կառավարության ծախսային քաղաքականության հակիրճ շարադրանքը ներկայացված է սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 12-ի ձևաչափին համապատասխան (տես, ՄԱՍ 3-ի հավելված 12-ը):

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՎԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ:

ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք պարտադիր ծախսային ծրագիրներն են «Ազգային ստանդարտների մշակում», «Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում», «Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում», «Եվրասիական տնտեսական միության և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն, ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում», «Մասնակցություն ստանդարտացման միջազգային, միջպետական և տարածաշրջանային կազմակերպությունների նիստերին և դրանց տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն»:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունն իր առաքելությունն իրականացնելու համար եկող տարի կարող է ֆինանսավորվել կից Excel ձևաչափով սահմանված գումարով: Ֆինանսավորման դեպքում ընկերության կողմից հստակ կիրառործվեն պարտադիր պարտավորությունների շրջանակում այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքները կնպաստեն ստանդարտացման ազգային համակարգի զարգացմանը: Ստացված ֆինանսավորումը պետք է ապահովի անձնակազմի աշխատավարձը, ընկերության հարկային պարտավորությունները, կոմունալ, տնտեսական, համակարգչային տեխնիկայի ծախսերը և անհրաժեշտ նյութերի ձեռքբերումը:

Ծախսային ծրագիրը հնարավորություն կտա.

- ✓ Մշակել ազգային ստանդարտներ տնտեսության գերակայող ճյուղերում:
- ✓ Իրականացնել տարբեր երկրների հետ կնքած համաձայնագրերի դրույթները՝ համապատասխան միջոցառումների կատարման միջոցով, համագործակցել միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների, ինչպես նաև ԵԱՏՄ և նրա հանձնաժողովների հետ:
- ✓ Իրականացնել ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման ոլորտներում միջպետական ստանդարտների ընդունումը և հակասող ազգային ստանդարտների գործողության դադարեցումը:
- ✓ Արդիականացնել նորմատիվ փաստաթղթերի գործող ֆոնդը և բարձրացնել միջազգային և եվրոպական ստանդարտների հետ ազգային ստանդարտների ներդաշնակեցման մակարդակը
- ✓ Ստանդարտացման ոլորտի մասնագետների մասնակցությունը ԵԱՏՄ, ՄՊԽ Ստանդարտացման գիտատեխնիկական հանձնաժողովի և տարբեր ենթահանձնաժողովների նիստերին:

2) Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ:

ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք հայեցողական ծախսային ծրագիրը «Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության վճար» -ն է: Ծախսային ծրագիրը հնարավորություն կտա ապահովել մշակված ստանդարտների գիտատեխնիկական մակարդակը, կնպաստի մասնագետների շահագրգռվածությանը ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելուն:

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 1-ով սահմանված «Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափին» համապատասխան:

Գոյություն ունեցող ծրագրի/միջոցառման (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքներն ամփոփ տեսքով ներկայացված են սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ի ձևաչափին համապատասխան:

Նշված ծրագրի/միջոցառման գծով ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների ներկայացված են սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելվածներ 4-ի և 5-ի ձևաչափերին համապատասխան:

4.3. Նոր նախաձեռնությունները

Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր չկան և դրանց բացակայության պատճառով համապատասխան աղյուսակները չեն լրացվում:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից 2020-2022թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստանդարտացման ոլորտում ստացվող եկամուտների աղբյուրներն են՝

- կազմակերպության ստանդարտների (տեխնիկական պայմանների) մշակման համար խորհրդակցության տրամադրումը, փորձաքննությունը,
- ստանդարտների վաճառքը,
- կազմակերպությունների բաժանորդագրությունը՝ ստանդարտների ազգային ֆոնդից օգտվելու համար:

Ստանդարտների ազգային ինստիտուտը ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացվող եկամուտները ներկայացված են ՄԱՍ 3-ի հավելված 7-ում:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԼՈՒՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

«Ստանդարտների մշակման ծառայություններ» ծրագրի շրջանակներում տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր նախատեսված չեն:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ստանդարտացման ոլորտի արտաքին աղբյուրներից պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկեր և դրամաշնորհներ բացակայում են և այդ պատճառով դրանց հաշվին իրականացվելիք ծրագրերը նույապես բացակայում են, որի պատճառով չեն ներկայացվում հայտի օրինակելի ձևի ՄԱՍ 4-ի հավելված 9-ում ներկայացված աղյուսակները:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ստանդարտացման ոլորտի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ 2020-2022թթ. ժամանակահատվածի համար ներկայացված են ՄԱՍ 3-ի հավելված 10-ում ներկայացված աղյուսակներում:

9. ՄԺԾԾ ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Առաջարկվող ՄԺԾԾ-ն հիմնվում է հետևյալ ենթադրությունների վրա.

- բազմազան և միջազգային ճանաչում ունեցող ստանդարտացման ծառայությունների նկատմամբ տնտեսվարող սուբյեկտների պահանջարկը գնալով կաճի,
- ծրագրի իրականացման գործում շահագրգիռ կողմերի ներգրավումը կօգնի նվազագույնի հասցնել ռիսկերը:

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
1	Ստանդարտացման աշխատանքների հանդեպ շահագրգիռ կողմերի ցածր պահանջարկը	2	Պետական բյուջեից տարեկան ֆինանսավորման միևնույն մակարդակի պահպանում. ֆինանսավորում չստանալը	Տնտեսական աճի և տնտեսության ակտիվության բարձրացում: Ստանդարտացման ազգային համակարգի զարգացում, որի միջոցով հնարավոր է տնտեսության մեջ ներարկել կառավարման լավագույն փորձը ու նորարարությունը, բարձրացնել գործընթացների ու աշխատանքների արդյունավետությունը, ձեռք բերել մրցակցային առավելություններ միջազգային շուկաներում և նպաստել հայրենական առևտրաարդյունաբերական համալիրի զարգացմանը:

ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ձևաչափ

Ծրագիրը՝	04/01/01, «Ստանդարտների մշակման ծառայություններ»
Միջոցառումը՝	<ol style="list-style-type: none"> 1. «Ազգային ստանդարտների մշակում» 2. «Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպում» 3. «Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում» 4. «Եվրասիական տնտեսական միության և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն, ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում» 5. «Մասնակցություն ստանդարտացման միջազգային, միջպետական և տարածաշրջանային կազմակերպությունների նիստերին և դրանց տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն» 6. «Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության վճար»
Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝	<ol style="list-style-type: none"> 1. «Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում» 2. «Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում» 3. «Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում» 4. «Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում» 5. «Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում» 6. «Հայեցողական ծախսերին դասվող միջոցառում (շարունակական)»

Աղյուսակ 1. Ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները.

Ծախսային գործոնը և սպառվող (ծախսվող) ռեսուրսը	Գործոնի տեսակը	Չափի միավորը	Ստանդարտի (նորմատիվի) առկայությունը	Գործոնի կամ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը					Հիմնավորումներ/ Պատճառներ
				2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	
Գնային և ոչ գնային գործոններ՝									

Աշխատավարձ	Քանակական	1000 դրամ	—	11 400,0	11520,0	11400.0	11400.0	11400.0	Աշխատավարձի աճը պայմանավորված է գնաճով և ՀՀ-ում համանման աշխատանքների համար սահմանված միջին աշխատավարձի չափով:
Նյութեր	Քանակական	1000 դրամ	—	369,5	249,6	369.5	369.5	369.5	Ծախսերի աճը պայմանավորված է պահանջվող նյութերի պահանջարկի մեծացմամբ:
Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքների մասնակցության վճար	Քանակական	1000 դրամ	—	—	—	5000,0	5000,0	5000,0	ՀՀ ստանդարտացման մասին օրենքով նախատեսված է, որ ազգային ստանդարտները պետք է մշակվեն համապատասխան տեխնիկական հանձնաժողովների կողմից կամավոր սկզբունքով: Ներկայումս կամավորության սկզբունքը փաստացի չի գործում և կատարված աշխատանքների համար անհրաժեշտություն է առաջացել մասնագետներին վարձատրել:
Ա.Ա.Հ 20%						3353.9	3353.9	3353.9	

Հավելված N 3

Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ.

Պետական մարմնի անվանումը՝	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ
---------------------------	--------------------------------------

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

1. Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները.
<p>1. Մշակել ազգային ստանդարտներ տնտեսության գերակայող ճյուղերում:</p> <p>2. Իրականացնել տարբեր երկրների հետ կնքած համաձայնագրերի դրույթները՝ համապատասխան միջոցառումների կատարման միջոցով, համագործակցել միջազգային ստանդարտացման կազմակերպության և նրա հանձնաժողովների հետ, ստանդարտացման եվրոպական կոմիտեի և նրա հանձնաժողովների, ինչպես նաև ԵԱՏՄ և նրա հանձնաժողովների հետ:</p> <p>3. Իրականացնել ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման ոլորտներում միջպետական ստանդարտների ընդունումը և հակասող ազգային ստանդարտների գործողության դադարեցումը: Արդիականացնել նորմատիվ փաստաթղթերի գործող ֆոնդը և բարձրացնել միջազգային և եվրոպական ստանդարտների հետ ազգային ստանդարտների ներդաշնակեցման մակարդակը</p> <p>4. Ստանդարտացման ոլորտի մասնագետների մասնակցությունն ապահովում ԻՍՕ, ՍԵՆ, ԵԱՏՄ, ՄՊԽ Ստանդարտացման գիտատեխնիկական հանձնաժողովի և տարբեր ենթահանձնաժողովների նիստերին:</p> <p>5. Մշակված ազգային ստանդարտների գիտատեխնիկական մակարդակի ապահովում:</p>

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.

Դասիչ	Ծրագիր/Միջոցառում	2018թ. Փաստացի (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ (հազ. դրամ)	2021թ (հազ. դրամ)	2022թ (հազ. դրամ)
Ծրագիր						
04/01/01	Ծրագրի անվանումը՝					
	«Ստանդարտների մշակման ծառայություններ»					
	Ծրագրի նպատակը՝					
	Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացում և հայրենական արտադրանք-ների մրցունակությամբ բարձրացում	14 123,4	14 123,4	20123.4	20123.4	20123.4
	Վերջնական արդյունքի նկարագրությունը՝					
	Անորակ արտադրանքի հետևանքով քաղաքացիներին և շրջակա միջավայրին պատճառված վնասների նվազում					

ՄԱՍ 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացում և հայրենական արտադրանքների մրցունակության բարձրացում	04/01/01 Ստանդարտների մշակման ծառայություններ	Նպաստել նորարական ազգային ստանդարտների ներդրմանը և կիրառմանը ՀՀ-ում՝ ազգային արտադրության ու ծառայությունների որակի բարձրացման, առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման, շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի անվտանգության պաշտպանության, կառավարման լավագույն փորձի ներդրման, սպառողների շահերի պաշտպանության և իրազեկվածության բարձրացման նպատակներով:	Ազգային ստանդարտների մշակում: Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում: Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում: ԵԱՏՄ և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում:	2019թ.	Ստանդարտացման ազգային համակարգի զարգացում, որի միջոցով հնարավոր է տնտեսության մեջ ներարկել կառավարման լավագույն փորձը ու նորարարությունը, բարձրացնել գործընթացների ու աշխատանքների արդյունավետությունը, ձեռք բերել մրցակցային առավելություններ միջազգային շուկաներում և նպաստել հայրենական առևտրաարդյունաբերական համալիրի զարգացմանը: Տեխնիկական կանոնակարգման ոլորտներում միջպետական ստանդարտների ընդունում և հակասող ազգային ստանդարտների գործողության դադարեցում: ԵԱՏՄ շուկա մրցունակ հայրենական արտադրանքի ներմուծման և արտահանման ապահովում՝ առանց տեխնիկական խոչընդոտների:	2022թ.	ՍԱԻ ՓԲԸ-ն սահմանվում է ՀՀ կառավարության կողմից և իրեն վերապահված իրավասությունների շրջանակում չափագիտության բնագավառում իրականացնում պետական քաղաքականություն:

ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
1067	Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ

Ծրագրի միջոցառումները

Ծրագրի դասիչը՝	04.01.01	Ցուցանիշներ					անժամկետ
Միջոցառման դասիչը՝		2018թ. փաստ.	2019թ սպասվող	2020թ	2021թ	2022թ	
Միջոցառման անվանումը՝	Ստանդարտների մշակման ծառայություններ						
Նկարագրությունը՝	Արտադրանքի և ծառայությունների գծով ազգային ստանդարտների մշակում, միջպետական, եվրոպական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն և ստանդարտացման աշխատանքների կազմակերպում և ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ, ԵԱՏՄ և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում, Մասնակցություն ստանդարտացման միջազգային, միջպետական և տարածաշրջանային կազմակերպությունների նիստերին և դրանց տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն:						
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցման միջոցառումներ						
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ						
Արդյունքի չափորոշիչներ							
դրական	<Ոչ ֆինանսական չափորոշիչ>						
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		14123,4	14123,4	20123.4	20123.4	20123.4	

Հավելված N 4 Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	2018թ փաստ. (հազ. դրամ)					2019թ սպասվող (հազ. դրամ)					2020թ բյուջե (հազ. դրամ)					2021թ և 2022 բյուջե (հազ. դրամ)								
		Ընդամենը	Աշխատավարձ	Կրմունալ ծախսեր, հարկեր, տնտեսական և համակարգչային ծախսեր	Նյութեր	Գործուղման ծախսեր	Այլ ծախսեր	Ընդամենը	Աշխատավարձ	Կրմունալ ծախսեր, հարկեր, տնտեսական և համակարգչային ծախսեր	Նյութեր	Գործուղման ծախսեր	Այլ ծախսեր	Ընդամենը	Աշխատավարձ	Կրմունալ ծախսեր, հարկեր, տնտեսական և համակարգչային ծախսեր	Նյութեր	Գործուղման ծախսեր	Այլ ծախսեր	Ընդամենը	Աշխատավարձ	Կրմունալ ծախսեր, հարկեր, տնտեսական և համակարգչային ծախսեր	Նյութեր	Գործուղման ծախսեր	Այլ ծախսեր
04/01/01	Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ																								
	«Ստանդարտների մշակման ծառայություններ»	14123.4	11400.0	2353.9	369.5	--	--	14123.4	11520.0	2353.8	249.6	--	--	20123.4	13680.0	--	443.4	--	6000.0	20123.4	13680.0	--	443.4	--	6000.0

Հավելված N 5

Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման			2018թ փաստ. (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ բյուջե (հազ. դրամ)	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022թ բյուջե (հազ. դրամ)
		Բա-ժին	Խումբ	Դաս					
1067	Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ	X	X	X					
04.01.01	«Ստանդարտների մշակման ծառայություններ»				14123.4	14123.4	20123.4	20123.4	20123.4

Հավելված N 7. Պետական մարմնի և դրա ենթակա կազմակերպությունների ստացվելիք եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

(հազ. դրամ)

Եկամուտների ստացման աղբյուրների անվանումները	Փաստացի ըստ 2017 թվականի տարեկան հաշվետվության	2018 թվականի սպասողական	Կանխատեսում		
			2019թ.	2020թ.	2021թ.
ԸՆԴԱՄԵՆԸ					
այդ թվում՝					
1. Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից	220000.0	225000.0	230000.0	235000.0	240000.0
2. Ստացվող նվիրատվություններից	0	0	0	0	0

Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար.

Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2020-2022թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ

(հազ. դրամ)

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1. Պետական մարմնի գծով 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X	20123.4	20123.4	20123.4
2. <<<< 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները	14123.4	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.)	X	20123.4	20123.4	20123.4
3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման)	X	20123.4	20123.4	20123.4
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով	X	-	-	-
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	X	-	-	-
4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2)	X	-	-	-
5. Տարբերությունը 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X	-	-	-

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ.

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը՝ որպես Ստանդարտացման ազգային մարմին, սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ստանդարտացման բնագավառում իրականացնում պետական քաղաքականություն:

1976 թվականին ոլորտի աշխատանքները զարգացնելու նպատակով ստեղծվում է Հայաստանի Հանրապետական ստանդարտացման և չափագիտության կենտրոն: 2002 թվականին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հրամանով ստանդարտացման և համապատասխանության հավաստման աշխատանքները բարելավելու

նպատակով «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ և «Եր-Թեսթ» սերտիֆիկացման և փորձարկման կենտրոնի բազայի հիման վրա ստեղծվեց «Ստանդարտների և որակի ազգային ինստիտուտ» ՓԲԸ, որը 2004 թ. վերանվանվեց «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ: Ստանդարտացման աշխատանքների զարգացման նպատակով ինստիտուտի մասնագետները իրականացրել են արտադրանքի և որակի կառավարման սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկման, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի փորձաքննության և տեղեկատվական սպասարկման ծառայություններ:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ.

Ինչպես գիտենք, առաջիկա հինգ տարիներին՝ ՀՀ կառավարության գործունեությունը միտված է լինելու Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսություն կառուցելուն: Այս նպատակին հասնելու համար առանցքային նշանակություն ունեցող կետերից է մարդու իրավունքների պաշտպանությունը, մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ապահովմամբ՝ բարեկեցության մակարդակի շարունակական բարձրացումը:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ գործունեության կարևորագույն ուղղություններից է ստանդարտացման ոլորտում միջազգային համագործակցությունը: Ստանդարտների ազգային ինստիտուտը 1997թ-ից ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ԻՍՕ (ISO) միջազգային ստանդարտացման կազմակերպությունում լիիրավ անդամի և 2008 թվականի հունվարի 1-ից ՍԵՆ (CEN) Ստանդարտացման Եվրոպական կոմիտեում՝ գործընկեր ստանդարտացման մարմնի (Companion Standardization Body) կարգավիճակով: Միաժամանակ ակտիվորեն մասնակցում է ԻՍՕ-ի և ՍԵՆ-ի տեխնիկական հանձնաժողովների և ենթահանձնաժողովների աշխատանքներին: Ստանդարտների ազգային ինստիտուտը, որպես ստանդարտացման ազգային մարմին 1992թ.-ից անդամակցում և մասնակցում է ԱՊՀ մասնակից-պետությունների Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՍՉՍ ՄՊԽ) ստանդարտացման կոմիտեների աշխատանքներին: Ինստիտուտի գործունեության ուղղություններում կարևոր տեղ են զբաղեցնում ազգային (ՀՍ), միջպետական (ԳՕՍ) ստանդարտների մշակումը և փորձաքննությունը, միջազգային (ԻՍՕ) և եվրոպական (ԵՆ) ստանդարտների նախագծերի փորձաքննության կազմակերպումը, ազգային ստանդարտների նախապատրաստումը և ընդունումը, ինչպես նաև ստանդարտացման բնագավառի գիտամեթոդական աշխատանքները: Ինստիտուտը կողողինացնում է ՀՀ տարածքում գործող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքները: Ստանդարտների ազգային ինստիտուտը ձևավորում և վարում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների ազգային ֆոնդը, որը համալրված է շուրջ 35000 միավոր ստանդարտացման փաստաթղթերով, այդ թվում՝ միջազգային (ԻՍՕ), եվրոպական (ԵՆ), միջպետական (ԳՕՍ), Հայաստանի Հանրապետության ստանդարտներով (ՀՍ) և այլ պետությունների ստանդարտներով:

Նորարական ազգային ստանդարտների ներդրումը և կիրառումը ՀՀ-ում մեծապես նպաստում է ազգային արտադրության ու ծառայությունների որակի բարձրացմանը, առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, շրջակա միջավայրի, մարդկանց կյանքի, անվտանգության պաշտպանությանը, կառավարման լավագույն փորձի ներդրմանը, սպառողների շահերի պաշտպանությանը և իրազեկվածության բարձրացմանը:

Թվարկված հիմնախնդիրները զգալի ազդեցություն են գործում Հայաստանի տնտեսական զարգացման ներկայիս մակարդակի վրա, քանի որ ստանդարտացումը նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծման ու զարգացման ամենահիմնական գործոնն է:

ՀՀ ԿԶԾ 279 կետով սահմանվում է երկրի տնտեսական ինստիտուտների և օրենսդրության ինտենսիվ համապատասխանեցումը ԵՄ պահանջներին և ստանդարտներին, ինչպես նաև նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքերի ստեղծումն ու զարգացումը դասում են ԿԶԾ-ի տնտեսական քաղաքականության գերակայությունների շարքին: ՀՀ ԿԶԾ 270, 279, 359 և այլ կետերը վկայում են ստանդարտների կարևորությունը ՀՀ տնտեսության կայուն զարգացման համար: Այդուհանդերձ, ներկայումս դժվար է թվային արտահայտությամբ գնահատել ստանդարտացման աշխատանքների ազդեցությունը և օգուտը տնտեսական զարգացման համար: Այդ ուղղությամբ ներկայումս Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) կողմից աշխատանքներ են տարվում համապատասխան մեթոդաբանության մշակման նպատակով:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ոլորտային քաղաքականության նպատակների և թիրախների ապահովման համար 2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղություններն են.

1. Ազգային ստանդարտների մշակում,
2. Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում,
3. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում,
4. Եվրասիական տնտեսական միության և ՀՀ ազգային տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտների փորձաքննություն, ստանդարտների ներդաշնակեցում և ՀՀ-ում դրանց գործարկման ապահովում,
5. Մասնակցություն ստանդարտացման միջազգային, միջպետական և տարածաշրջանային կազմակերպությունների նիստերին և դրանց տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին՝ միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների համաձայն
6. Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության վճար

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը՝ որպես Ստանդարտացման ազգային մարմին, իր առաքելությունն իրականացնելու համար եկող տարի կարող է ֆինանսավորվել ՄԺԾԾ հայտով սահմանված գումարով (56434,3 հազ դրամ): Ֆինանսավորման դեպքում ընկերության կողմից կիրառործվեն պարտադիր պարտավորությունների շրջանակում այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքները կնպաստեն ՀՀ տնտեսության գերակա ճյուղերի զարգացմանը՝ ստեղծելով համապատասխան հստակ և արդիական նորմատիվ փաստաթղթային բազա: Ստացված ֆինանսավորումը պետք է ապահովի անձնակազմի աշխատավարձը, ընկերության հարկային պարտավորությունները, կոմունալ, տնտեսական, համակարգչային ծախսերը և անհրաժեշտ նյութերի ձեռքբերումը:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ.

ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք գերակա ծախսային ծրագրերը՝ հնարավորություն կտան ապահովել ստանդարտացման ազգային համակարգի զարգացմանը՝

գիտության և արտադրության ներկա պահանջները բավարարելու համար: Ծախսերը բերված են ստորև.

Աշխատավարձ – 13680.0

Նյութեր – 443.4

Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության վճար - 6000,0

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ստանդարտների մշակման ծառայություններ» ծրագրի կատարման գծով 2020թ. Համար

h/h/	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Քանակը	Շահառուների թիվը	Միավորի գինը	Ընդամենը /հազ. դրամ/
1.	Ազգային ստանդարտների մշակման ծրագիր			Շահագրգիռ կողմեր		8242.8
1.1	Աշխատավարձ					6720.0
1.1.1	Բաժնի պետ	ամիս-մարդ	12	1	170	2040.0
1.1.2	Մասնագետ	ամիս-մարդ	12	3	130	4680.0
1.2	Նյութեր**					149.0
1.2.1	Թուղթ	տուփ	70		1.7	119.0
1.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	10		3	30.0
1.3	Ա.Ա.Հ.					1373.8
2.	Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման ծրագիր			Շահագրգիռ կողմեր		2000.2
2.1	Աշխատավարձ					1560.0
2.1.1	Մասնագետ	ամիս-մարդ	12	1	130	1560.0
2.2	Նյութեր					106.8
2.2.1	Թուղթ	տուփ	54		1.7	91.8
2.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	5		3	15.0
2.3	Ա.Ա.Հ.					333.4
3.	Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագիր			Շահագրգիռ կողմեր		3880.4
3.1	Աշխատավարձ					3120.0
3.1.1	Մասնագետ	ամիս-մարդ	12	2	130	3120.0
3.2	Նյութեր					113.7
3.2.1	Թուղթ	տուփ	51		1.7	86.7
3.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	9		3	27.0
3.3	Ա.Ա.Հ.					646.74

4	Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքներին մասնակցության վճար					6000.0
4.1	Տեխնիկական հանձնաժողովների մասնակցության վճար					5000.0
4.2	Ա.Ա.Հ.					1000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ					20,123.4

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ստանդարտների մշակման ծառայություններ» ծրագրի կատարման գծով 2020թ. համար

h/h/	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Քանակը	Շահառուների թիվը	Միավորի գինը	Ընդամենը /հազ. դրամ/
1.	Ազգային ստանդարտների մշակման ծրագիր			Շահագրգիռ կողմեր		8242.8
1.1	Աշխատավարձ[*]					6720.0
1.1.1	Բաժնի պետ	ամիս-մարդ	12	1	170	2040.0
1.1.2	Մասնագետ	ամիս-մարդ	12	3	130	4680.0
1.2	Նյութեր**					149.0
1.2.1	Թուղթ	տուփ	70		1.7	119.0
1.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	10		3	30.0
1.3	Ա.Ա.Հ.					1373.8
2.	Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման ծրագիր			Շահագրգիռ կողմեր		2000.2
2.1	Աշխատավարձ					1560.0
2.1.1	Մասնագետ	ամիս-մարդ	12	1	130	1560.0
2.2	Նյութեր					106.8
2.2.1	Թուղթ	տուփ	54		1.7	91.8
2.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	5		3	15.0
2.3	Ա.Ա.Հ.					333.4
3.	Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագիր			Շահագրգիռ կողմեր		3880.4
3.1	Աշխատավարձ					3120.0

3.1.1	Մասնագետ	ամիս-մարդ	12	2	130	3120.0
3.2	Նյութեր					113.7
3.2.1	Թուղթ	տուփ	51		1.7	86.7
3.2.2	Քարթրիջի լիցքավորում	հատ	9		3	27.0
3.3	Ա.Ա.Հ.					646.74
4	Ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների աշխատանքների մասնակցության վճար					6000.0
4.1	Տեխնիկական հանձնաժողովների մասնակցության վճար					5000.0
4.2	Ա.Ա.Հ.					1000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ					20,123.4

* Աշխատանքային հաստիքների քանակը սահմանվում է համաձայն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թ.-ի դեկտեմբերի 27-ի N 1273-Ա հրամանով հաստատված հաստիքացուցակի:

** "Թուղթ և քարթրիջի լիցքավորումը" հաշվարկելու համար հիմք են հանդիսացել տպիչ սարքերի լիցքավորման վերաբերյալ Ա/Ձ Պետրոս Բաղդասարյանի հետ կնքած "Պայմանագիր N ՍԱԻ-ՄԱԾՁԲ-18/2, առ 01.02.2018" (պատճեն կցվում է) պայմանագիրը: Թղթի քանակը հաշվարկվել է ըստ ստանդարտների մշակման ծավալների:

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ**

Ստանդարտների մշակման ծառայություններ

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությունը «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում, իրականացնում է հետևյալ ծառայությունները՝

- ընդունում եւ գործողության մեջ է դնում ազգային ստանդարտները,
- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական եւ ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային ստանդարտների եւ այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը ազգային ստանդարտների կարգավիճակով՝ ստանդարտացման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան,
- կազմակերպում է միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների փորձաքննություն,
- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային կազմակերպություններում,
- մասնակցում է միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքներին,
- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ եւ համակարգում դրանց գործունեությունը,
- ստեղծում եւ վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը,
- իրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների եւ ուղեցույցների, դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը) եւ պատասխանատվություն է կրում դրանց պահպանման համար:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերությանը ամրագրված ծառայությունները ֆինանսավորվում են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն և Հայաստանի Հանրապետության ամենամյա բյուջեի մասին ՀՀ օրենքի 04 բաժնի, 01 խմբի, 01 դասի Ստանդարտների մշակման ծառայություններ, որով ծառայությունները խմբավորվում են՝

1. Ազգային ստանդարտների մշակում,

